

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱՐԵՆԱՎՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Վ. Է. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Ծոցիալիստական հասարակարգում հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման, տնտեսական աճի կարևորագույն ռեզերվներից մեկը տնտեսավարման բոլոր ոլորտներում խնայողության ռեժիմի ըստ ամենայնի արմատավորումն է։ Այս հարցին մեծ ուշադրություն դարձվեց ՍՄԿԿ XXVII համագումարում, որտեղ ընդգծվեց. «Տնտեսել ամեն ինչում և ամենուրեք, արտադրությունում և կենցաղում, անտարբեր շանցնել անտնտեսավարության ու վատնողության կողքով»¹։ Ժողովրդական տնտեսության մասշտաբների աճի նախատեսված բարձր տեմպերը, կառուցվածքի բարդացումը և գրանցում կատարվող որակական տեղաշարժերն առավել մեծ պահանջներ են ներկայացնում բոլոր տեսակի ռեսուրսների լավագույն ու խելացի օգտագործմանը, և ի վերջո դրանց բացարձակ և հարաբերական կրճատմանը։ Սոցիալիստական էկոնոմիկայի առավելությունները, որոնք բխում են արտադրության միջոցների նկատմամբ հասարակական սեփականության բնույթից, ժողովրդատնտեսական պլանայնության հնարավորություններից, շահագործման բացակայությունից, պլանայիններ են ապահովում առավել ռացիոնալ օգտագործելու արտադրական, նյութական և աշխատանքային ռեսուրսները։

Ժամանակակից պլանայիններում կարևոր նշանակություն է ստանում հատկապես նյութական ռեսուրսների, վառելիքի, էլեկտրաէներգիայի, հումքի և նյութերի օգտագործման բարելավումը։ Դրանց խնայողական օգտագործումը տնտեսավարման հիմնական ցուցանիշներից է։ Դա մի ռեզերվ է հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման և ինտենսիվացման բնագավառում։ Ներկայումս ՍՍՀՄ արդյունաբերության մեջ նյութական ծախսումների տեսակարար կշիռն ամբողջ ընթացիկ ծախսումների մեջ կազմում է ավելի քան 80% (որից 63,6%-ը բաժին է հասնում հումքին և նյութերին, 4,1%-ը՝ վառելիքին, 2,8%-ը՝ էներգիային, 7,9%-ը՝ ամրոտիղացիային) և այն ունի աճի միտում։ Դյուղատնտեսության մեջ նյութական ծախսումները կազմում են նրա արտադրանքի ինքնարժեքի կեսից ավելին։ Դրա գերակշռող մասը (73%-ը) բաժին է հասնում կերերին և սերմերին, մոտ 10%-ը՝ հանքային պարարտանյութերին ու թունաքիմիկատներին, 10%-ը կազմում են աշխատանքների մեքենայացման հետ կապված ծախսերը (դիզելային վառելիք, բենզին, էլեկտրաէներգիա, պահեստամասեր, դողեր), 13%-ը այլ նյութական ծախսեր են²։ Պետք է նշել, որ գյուղատնտեսության տեխնիկական բազայի զարգացման զուգընթաց արդյունաբերական բնույթի նյութական ծախսումները պետք է աճեն։

Համարյա նույն իրավիճակում են գտնվում ժողովրդական տնտեսության նյութական արտադրության մյուս ճյուղերը։ Հասարակական արտադրության մեջ ամբողջությամբ վերցրած այդ ծախսումները կազմում են շուրջ 58—60%։ Դրանով էլ հենց որոշվում է այդ ծախսումների տնտեսական արդյունավետությունը։ Արդի ժամանակաշրջանում ժողովրդական տնտեսության մասշտաբով նյութական ծախսումների մեկ տոկոս խնայողությունը կազմում է ավելի քան 8 մլրդ ռուբլի։ Բացի այդ, նյութական ռեսուրսների ավելի ու-

1 Մ. Ս. Գորբաչով, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քաղաքական զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, Երևան, 1986, էջ 70։

2 Материальные ресурсы, рациональное использование и экономия, М., 1985, с. 56.

ցիոնալ օգտագործումը դրանց նկատմամբ պահանջարկի արդյունավետ ծածկման աղբյուր է: Նյութական ռեսուրսների կորուստների կրճատման և ռացիոնալ օգտագործման հետ կապված միջոցառումներն ինքնըստինքյան պահանջում են որոշակի ծախսումներ (ինչպես կապիտալ, այնպես էլ ընթացիկ), սակայն դրանք սովորաբար ավելի քիչ են (հաճախ մի քանի անգամ) այն ծախսումներից, որոնք անհրաժեշտ են լրացուցիչ հումքային ռեսուրսների արտադրության համար:

Սովետական Միությանում տարեկան թողարկվում է ավելի քան մեկ տրիլիոն ռուբլու արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանք, ծախսելով մեծ քանակությամբ նյութական և վառելիքաէներգետիկ ռեսուրսներ:

Բավական է նշել, որ յուրաքանչյուր օրվա ընթացքում միջին հաշվով երկրի ընդերքից արդյունահանվում են 700 հազ. տոննա տարբեր հանքանյութեր: Բացի այդ, արդյունահանվում է նաև մոտ 2 մլն. տոննա քարածուխ: Օրական արտադրվում է 300 հազ. տոննա չուգուն և 550 հազ. տոննա պողպատ, տասնյակ հազարավոր տոննա քիմիական պարարտանյութեր, հարյուր հազարավոր տոննա ցեմենտ և այլն: Միայն էլեկտրաէներգիայի ջերմության և խրտացված օդի արտադրության համար տարեկան ծախսվում է ավելի քան 870 մլն տոննա պայմանական վառելիք, իսկ 1 մլրդ տոննայից ավելին՝ արտադրատեխնոլոգիական նպատակների համար:

Ավելորդ չէ նշել, որ արդյունահանող արդյունաբերության մեջ ներդրվում է ամբողջ կապիտալ ներդրումների մինչև 40%-ը, նրանում զբաղված են երկրի արտադրական ֆոնդերի մոտ 30%-ը: Մեր երկրի ժողովրդական տնտեսությունը տարեկան օգտագործում է 5 մլրդ տոննայից ավելի ելակետային հումք: Սակայն դրա միայն 7%-ն է (ըստ զանգվածի) դառնում վերջնական պատրաստի արտադրանք, իսկ մնացած 93%-ը (հաճախ՝ 96—97%-ը) վերածվում են թափոնների, աղտոտելով շրջապատը և բնությունը:

ՍՍՀՄ-ը տիրապետում է հսկայական քանակությամբ օգտակար հանածոների պաշարների: Նրան բաժին է հասնում աշխարհի վառելիքային ռեսուրսների (վերածված պայմանական վառելիքի) 53,3%-ը, այգ թվում ածխի 55, տորֆի 60,5, այրվող թերթաքարերի 43,8, երկաթահանքի պաշարների 50, մարգանցային հանքի՝ 88%-ը, ֆոսֆորային հումքի $\frac{1}{3}$ մասը, անտառանյութի քառորդ մասը, հիդրոէներգետիկ ռեսուրսների 10%-ից ավելին: Սովետական Միությանն են պատկանում աշխարհի վարելահողերի 16, քաղցրահամ ջրերի պաշարների 11%-ը և այլն: Սակայն պետք է նշել, որ դրանք անսահմանափակ բնույթ չունեն և ռեսուրսների զգալի մասը՝ ենթարկվում է կորուստների, ինչպես արդյունահանման, այնպես էլ օգտագործման ժամանակ: Այսպես, ըստ մասնագետների գնահատման, երկրի ընդերքում են մընում արդյունահանման ժամանակ ածխի 30—40%-ը, բնական գազի 50, նավթի 70, երկաթահանքի 20%-ը³:

Վիճակը միաթարական չէ նաև դրանց արտադրական օգտագործման բընագավառում: Հաշվարկները ցույց են տալիս, որ հումքի և վառելիքի օգտակար կիրառության աստիճանը արտադրության տարբեր ճյուղերում տատանվում է 30—70%-ի սահմաններում: Դրա համար էլ ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թվականների և մինչև 2000 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղություններում նշված է. «Հետևողականորեն ուժեղացնել խնայողության ռեժիմը, որը արտադրության ինտենսիվացման կարևորագույն գործոններից մեկն է: Ռեսուրսախնայողությունը վերածել ժողովրդական տնտեսության հարաճուն պահանջարկների բավարարման վճռական պայմանի: Հասնել այն բանին, որ վառելիքի, էներգիայի, հումքի և նյութերի պահանջարկների 75—80 տոկոսը բավարարվի դրանց տնտեսման հաշվին: Ազգային եկամտի էներգատարությունը նվազեցնել առ-

³ В. И. Гостанов. Ресурсоснабжение—закон интенсификации, М., 1987, с. 3—4.

ներվադն 1,4 անգամ, իսկ մետաղատարությունը՝ գրեթե 2 անգամ⁴:

Պետք է նշել, որ սոցիալիստական հասարակարգում խնայողության ռե-
ժիմն ունի համընդհանուր բնույթ՝ դրա իրացումից առավելագույն արդյունա-
վետություն կարելի է ակնկալել միայն այն դեպքում, եթե այն գործի ժողո-
վրդական տնտեսության բոլոր ճյուղերում (արդյունաբերություն, գյուղատըն-
տեսություն, շինարարություն, տրանսպորտ, նյութատեխնիկական մատակա-
րարում, առևտուր և այլն), կառավարման բոլոր մակարդակներում (տեղամաս,
արտադրամաս, ձեռնարկություն, կազմակերպություն, միավորում, գերատես-
չություն, մինիստրություն) տնտեսական գործունեության բոլոր ուղղություն-
ներում (հիմնական արտադրություն, վերանորոգման-շահագործման բնագա-
վառ, կապիտալ շինարարություն և այլն):

Հայտնի է, որ գիտատեխնիկական առաջընթացը և գիտության նվաճում-
ների ներդրումն արտադրության մեջ ժողովրդական տնտեսության աճի գոր-
ծոնների մեջ մտցրել են քանակական և որակական զգալի փոփոխություններ,
որոնք նպաստում են արտադրության արդյունավետության բարձրացմանը,
նյութական ռեսուրսների օգտագործման բարելավմանն ու նյութական ծախ-
սումների կրճատմանը:

Արդի ժամանակաշրջանում երկրի տնտեսական ու սոցիալական զարգաց-
ման ծրագրի կատարումը զգալիորեն պայմանավորված է հումքային ռեսուրս-
ների սպառման անընդհատ աճով: Պետք է նշել, որ գնալով աճում են (բա-
ցարձակապես և հարաբերականորեն) կապիտալ ներդրումների ծավալները
հումքի, նյութերի, վառելիքային և էներգետիկ ռեսուրսների արդյունահան-
ման ու փոխադրման բնագավառում: Դա պատճառաբանվում է նոր և հեռա-
վոր շրջաններում հանքավայրերի յուրացման ու շահագործման բարդ պայ-
մաններով: Դրա համար էլ անցած երեք հնգամյակներում վառելիքի և հան-
քանյութերի արդյունահանման վրա կատարված կապիտալ ներդրումներն ա-
վելացել են մոտ 3 անգամ: Այս ամենը հրամայաբար պահանջում են իրակա-
նացնել նյութական ռեսուրսների օգտագործումն արմատականորեն բարելա-
վելու կոմպլեքս միջոցառումներ: Կառավարման բոլոր մակարդակներում
պետք է իրականացնել այնպիսի միջոցառումների համակարգ, որը նպատա-
կամղված լինի բոլոր տեսակի ռեսուրսների, սարքավորումների լրիվ օգտա-
գործմանը, կորուստների և թափոնների կրճատմանը, անարտադրողական
ծախսումների վերացմանը:

1981 թ. հունիսի 30-ին ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների խոր-
հուրդը որոշում ընդունեցին «Հումքային, վառելիքային և էներգետիկ և մյուս ռե-
սուրսների խնայողաբար օգտագործման ուղղությամբ աշխատանքները ուժե-
ղացնելու մասին», որտեղ նախատեսված է նյութական ռեսուրսների խնայո-
ղաբար ու արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումների լայն հա-
մակարգ: Հումքային ռեսուրսների օգտագործման բարելավման պրոբլեմներն
արգի փուլում չեն կարող սահմանափակվել մեկ երկրի շրջանակներով:

Սոցիալիստական համակարգի երկրներում նշված պրոբլեմն ուսումնա-
սիրվում է որպես համընդհանուր հարց, որով շահագրգռված են ոչ միայն ա-
ռանձին երկրներ, այլև համակարգն ամբողջությամբ վերցրած: Այսպես,
1985 թ. Տնտեսական փոխօգնության խորհրդի երկրների 40-րդ նստաշրջանը
հավանություն տվեց ՏՓԽ-ի երկրների մինչև 2000 թ. ընկած ժամանակաշր-
ջանի նյութական ռեսուրսների խնայողության և ռացիոնալ օգտագործման
ծրագրին⁵:

Նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հարցերին լուրջ ու-
շադրություն դարձվեց ՍՄԿԿ XXVFI համագումարում և Կենտրոնական կոմի-

⁴ ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թվականների և մինչև 2020
թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունները, Երևան, 1986, էջ 2:

⁵ А. И. Барковский и др., Рациональное использование ресурсов: опыт стран
СЭВ, М., 1986.

տեխնիկական (1986 թ.) պլանումում, ինչպես նաև ՍՄԿԿ Մրազրի նոր խրմբագրության մեջ, որտեղ մասնավորապես նշված է, որ գիտատեխնիկական առաջադիմության հիման վրա պետք է ապահովել բնական ռեսուրսների, հումքի, նյութերի, վառելիքի և էներգիայի արմատական օգտագործման բարելավում նրա արդյունահանումից մինչև կոմպլեքսային մշակումն ու վերջնական արդյունքի կիրառումը: Նախատեսվում է մինչև 2000 թ. ազգային եկամտի էներգատարությունը իջեցնել 1,4, իսկ մետաղատարությունը մոտ 2 անգամ⁶, խնդիր է դրված հասնել այն բանին, որ վառելիքի, էներգիայի, հումքի և նյութերի սպառման հավելածի 75—80%-ը բավարարվի դրանց խնայողության հաշվին: Ընթացիկ հնգամյակում նախատեսված է տնտեսման հաշվին բավարարել կարևորագույն նյութական ռեսուրսների սպառման հավելածի 60—65%-ը: Ընդհանուր առմամբ 12-րդ հնգամյակում հասարակական ամբողջական արդյունքի նյութատարությունը պետք է իջեցվի 4—5%-ով, ազգային եկամտի էներգատարությունը՝ 7—9 և մետաղատարությունը՝ 13—15%-ով⁷:

Ժամանակակից առաջադիմական կոնստրուկցիաներով մեքենաների ստեղծումը և ներդրումը հնարավորություն կտա ստանալու զգալի քանակությամբ արդյունք ոչ միայն նրա արտադրության, այլ նաև նոր տեխնիկայի շահագործման ժամանակ: Դրա հետ միասին մեքենաների, սարքավորումների արտադրողականության, հզորության և մյուս շահագործողական հատկանիշների բարելավման շնորհիվ հնարավորություն կստեղծվի առանց մեքենաների պարկի ավելացման բավարարել ժողովրդական տնտեսության պահանջը դրանց նկատմամբ:

Ներկայումս հասարակական արտադրության ինտենսիվացման պրոբլեմի նկատմամբ մեծանում է նյութական ծախսումների իջեցման պլանավորման և խթանման կատարելագործումը: Սակայն, պետք է նշել, որ մինչև վերջին ժամանակները նշված հարցերի վրա բավարար ուշադրություն չէր դարձվում: Զեռնարկություններում (արտադրական միավորումներում) արտադրանքի նյութատարության պլանավորման կատարելագործումը պետք է բարձրացվի համապատասխան մակարդակի, որպեսզի ծառայի ներարտադրական ռեզերվների լրիվ բացահայտմանը: Ըստ արտադրամասերի տեղամասերի արտադրանքի նյութատարության պլանավորումը և հաշվառումը մեծ նշանակություն ունի նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա հսկողությունը իրականացնելու համար: Նյութատարության ցուցանիշը օգտագործումը ներգործարանային պլանավորման մեջ կնպաստի ներարտադրական ռեզերվների մոբիլիզացմանը, թույլ կտա բացահայտելու, պարզելու յուրաքանչյուր տեղամասի, արտադրական օղակի մասնակցության աստիճանը ձեռք բերված տնտեսման մեջ:

Նյութատարության իջեցման պլանավորումը պետք է բխի ձեռնարկությունների առջև դրված խնդիրներից, նպաստի արտադրության արդյունավետության բարձրացմանը, տնտեսաշվարկի արմատավորմանը, ինչպես ամբողջ ձեռնարկության մասշտաբով, այնպես էլ նրա բոլոր օղակներում՝ բրիգադներում, տեղամասերում, արտադրամասերում և այլն:

Նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հասարակական նշանակությունը պահանջում է ուսումնասիրել այդ պրոբլեմը և կատարելագործել նյութատարության պլանավորումը: Նյութատարության ճշգրիտ պլանավորման համար նախ պետք է ստույգ կերպով բացահայտել նրա էությունը, ուսումնասիրել նրա դերը և նշանակությունը էկոնոմիկայում, ելնել հասարակական արդյունքի վերարտադրության պրոցեսից: Ընդհանրապես, նյութատարության ցուցանիշը չպետք է դիտել որպես միայն արտադրության վրա կատարվող նյութական ծախսումների հաշվառման միջոց: Նյութատարության տնտեսական էությունն ուսումնասիրելիս պետք է առանձնացնել աշխատանքի առարկաների ծախսումների դինամիկան բնա-

6 В. И. Потапов, *ն.վ. աշխ.*, էջ 56:

7 Նույն տեղում, էջ 57:

րային բովանդակությամբ: Բնաիրային արտադրատեսակները նյութական ծախսումների սահմանման անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակական վերարտադրության մեջ աշխատանքի առարկաների ու աշխատանքի գործիքների շրջապատուտի սկզբունքային տարբերություններով, ամորտիզացիայի տնտեսական դերով, ինչպես նաև պատրաստի արդյունքին դրանց արժեքի փոխանցման բնույթով: Աշխատանքի գործիքները մասնակցում են արտադրության բազմաթիվ ցիկլերի, իրենց արժեքը պատրաստի արդյունքին փոխանցում են մաս-մաս՝ ամորտիզացիոն մասհանումների ձևով, չփոխելով իրենց արտաքին բնաիրային ձևը, իսկ աշխատանքի առարկաները մասնակցում են միայն արտադրական մեկ ցիկլի, իրենց արժեքը միանգամից փոխանցելով պատրաստի արտադրանքին (նոր արժեքին): Դճարկե, անհնարին է որոշել աշխատանքի միջոցների մաշվածությունը բնեղեն արտադրատեսակներ, որն էլ հնարավորություն չի տալիս համադրելու աշխատանքի միջոցների ու աշխատանքի առարկաների նյութածախսությունը և կոմպլեքս ձեւով բնութագրելու ամբողջ առարկայացած աշխատանքի արտադրական սպառումը:

Նյութական ռեսուրսների օգտագործման բարելավման ամենահիմնական ուղիներից մեկը աշխատողների նյութական շահագրգռվածության բարձրացումը և տնտեսական խթանման արմատավորումն է:

Դեռևս 1921 թ. Վ. Ի. Լենինը նշել է, որ սոցիալիզմ և կոմունիզմ կարելի է կառուցել ժողովրդի անմեղական խանդավառության վրա հենվելով, այլ մեծ հեղափոխությամբ ծնված խանդավառության օգնությամբ, հենվելով անձնական շահի, անձնակազմի շահագրգռվածության, տնտեսական հաշվարկի վրա՝ ներկայումս էլ տնտեսական խթանների արդյունավետությունը, արտադրության վրա դրանց ազդեցության ուժը հիմնավորապես որոշվում է այն բանով, թե որանցում որքանով են հաշվի առնվել տնտեսական շահագրգռվածությունը, այն ինչքանով է նպաստում տնտեսական մեխանիզմի կատարելագործմանը և որքանով է զուգակցում անհատի, կոլեկտիվի և պետության շահերը: Պլանավորման և կառավարման բնագավառում նախկինում թույլ տրված սխալները շատ դեպքերում հանգեցրին անձնական, կոլեկտիվ և պետական շահերի անհամատեղելիությանը, որն էլ իր հերթին հանգեցրեց երկրում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև ռազմականության գոյություն ունեցող համապատասխանելիության որոշակի խախտմանը: Արտադրողական ուժերի հարգացման արդի մակարդակին պետք է համապատասխանեցնել արտադրական հարաբերությունների այնպիսի մակարդակ, որը ոչ թե արգելակի, այլ նպաստի արտադրողական ուժերի հետագա զարգացմանը: Նման բնույթի սխալների թվին կարելի է դասել նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ընդունված պրակտիկան, որը նախկինում տիրապետում էր արտադրության համարյա բոլոր բնագավառներում: Այսպես, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում լրիվ կերպով չի իրացվում աշխատողի նյութական պատասխանատվությունը հումքի և նյութների ռացիոնալ օգտագործման նկատմամբ: Այսպես ինչով կարելի է բացատրել առևտրի ցանցում, պահեստներում, բազաներում և այլուր գոյացած ցածրորակ ու անոռակ արտադրանքի հսկայական քանակությունները: Պետք է ամենուր ներդրվեն աշխատանքի արդյունքների գնահատման այնպիսի ցուցանիշներ, որոնք խթանեն հումքային ռեսուրսների օգտագործման բարելավումը և կանխեն դրանց անխնա և անփութ օգտագործումը: Այսօր պետք է խնդիր դրվի ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի արտադրանքի նյութատարության իջեցման համար առանձին աշխատողները և կոլեկտիվները շահագրգռված լինեն տնտեսական գործունեության վերջնական արդյունքների առումով ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և փաստացի տնտեսակարար ծախսումների կրճատման մեջ:

Նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման տնտեսական խթան-

8 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 44, էջ 181:

ման գործը բավական բարդ է, քանի որ աշխատանքի առարկաների սպառման պլանավորման և կառավարման մակարդակներում լուծվում են տարբեր խնդիրներ: Այն պահանջում է հետագա կատարելագործում՝ ելնելով ճյուղային ու ռեգիոնալ առանձնահատկություններից, ինչպես նաև արտադրության կոնկրետ պայմաններից:

Ներկայումս գործող պլանային ցուցանիշների համակարգում աշխատողների նյութական խթանումը գլխավորապես ուղղված է կենդանի աշխատանքի խնայողությանը, իսկ առարկայացած աշխատանքի վրա, որը կազմում է թողարկվող արտադրանքի ինքնարժեքի շուրջ 60—80%-ը՝ առավել նվազ ուշադրություն է դարձվում: Նյութական խթանման գործող համակարգն ունի մի շարք թերություններ, քանի որ արտադրական ձեռնարկությունների աշխատողներին նպատակամղում է քանակական ցուցանիշների կատարմանը, խրախուսումը հիմնականում կատարվում է միավոր արտադրանքի վրա կենդանի աշխատանքի նորմատիվային ծախսերի պահպանմանը և կրճատմանը համապատասխան, թերազնահատվում է նյութական խրախուսման դերը առարկայացած աշխատանքի նվազագույն ծախսումներով արտադրության վերջնական արդյունքներին հասնելու գործում, պարզեցաբար գործող պայմանները և ցուցանիշները անմիջականորեն կապված չեն առանձին անհատների և կոլեկտիվների աշխատանքի արդյունքների գնահատման ցուցանիշների հետ և այլն:

Նյութական ռեսուրսների օգտագործման բարելավման աշխատանքների խթանման հիմնական բացթողումներից մեկն էլ այն է, որ գոյություն չունի արտադրանքի նյութատարության իջեցման տիպային կանոնադրություն: Շատ դեպքերում ձեռնարկություններն իրենք են մշակում համապատասխան կանոնադրություն (որն ինքնըստինքյան շատ խրախուսելի է), սակայն գրանցում չեն ընդգրկվում ցուցանիշների այն բոլոր շրջանակները, որոնք իրականում կարող են վճռորոշ դեր խաղալ նյութական ռեսուրսների լավագույն օգտագործման համար: Այդ ձեռնարկություններում գործող կանոնադրությունները մեթոդական և կազմակերպական միասնություն չունեն: Դրանք խրախուսում են ենթադրում միայն սահմանափակ տեսակի նյութական ռեսուրսների անտեսման համար, և արտադրանքի նյութատարության օգտագործման բարելավմանն առնչվող ոչ բոլոր աշխատողներն են խթանվում:

Նյութական ռեսուրսների օգտագործման բարելավման հիմնական ուղղություններից է արտադրանքի նյութատարության նորմավորումը: Նորմատիվային բազան պլանավորման օրգանական մասն է, առանց որի անհնար է բարձրացնել ձեռնարկությունների արտադրանքի նյութատարության իջեցման պլանավորման մակարդակը: Արդյունաբերական ձեռնարկություններում նորմաների և նորմատիվների համակարգի արմատավորումը հնարավորություն կտա բարձրացնելու նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների հաշվարկման ու հսկողության նորմատիվային մեթոդի գործունեությունը: Պետք է նշել, որ վերագաս կառավարչական մարմինները (մինիստրությունները, հանրապետությունների մինիստրների խորհուրդները և պետպլանները, ՄՍՀՄ պետպլանը) դեռևս բավարար աշխատանք չեն տանում պլանավորման նորմատիվային բազայի ձևավորման համար, նորմերի մշակման ժամանակ լրիվ չեն արտացոլվում գիտատեխնիկական առաջադիմության նվաճումները, գրեթե բացակայում են պրոգրեսիվ տեխնիկատնտեսական նորմերի ու նորմատիվների համակարգի ստեղծման համար կատարվող աշխատանքի միասնական կազմակերպման խնդիրները և այլն:

Նյութական ռեսուրսների օգտագործման նորմատիվային բազայի կազմակերպման ժամանակակից վիճակը ձեռնարկություններում չի համապատասխանում պլանավորման պահանջներին: Հաճախ ներգործարանային պլանավորման պրակտիկայում բացակայում է նյութական ռեսուրսների օգտագործման նոր-

9 Ռ. Ա. Հ ա ր ո յ ո յ ա ն, Արտադրանքի նյութատարության իջեցման տնտեսական լծակները, Երևան, 1986, էջ 51:

մերի համակարգի ձևավորման կոմպլեքսային մոտեցումը, նորմերի օգտագործումը շատ դեպքերում կրում է փորձնական բնույթ: Այդ պատճառով էլ նման բաղադրի վրա ընդունված տեղական որոշումները նյութական ռեսուրսների խնայողաբար օգտագործման հեռանկար չեն կարող տալ: Որոշ ձեռնարկություններում նյութական ռեսուրսների օգտագործման նորմավորման ոչ բավարար դրվածքը բերում է աշխատանքի առարկաների կարևորագույն տեսակների խնայման ու ծախսումների նորմերի իջեցման հաստատված առաջադրանքների թերակատարմանը: Պետք է նշել, որ ներկայումս էլ, երբ ամենուրեք ձևակերպություններում ձեռնամուխ են եղել տնտեսական հաշվարկի արմատավորմանը, նյութական ռեսուրսների ծախսումների նորմերի իջեցումից ստացվող խնայողություններ հիմնականում հանգում է նյութական ռեսուրսների այն տեսակների խնայողությանը, որոնց համար սահմանվում են ծախսումների նորմերի իջեցման դիրեկտիվ առաջադրանքներ: Մեր հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների փաստացի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ձեռնարկությունների զգալի մասն աշխատանքի առարկաների հիմնական տեսակների ծախսումների նորմերի իջեցման պլանային առաջադրանքները չի կատարում: Այսպես, 1987 թ. Հայաստանի մեքենաշինական շատ ձեռնարկություններ սև և գունավոր մետաղների գլանվածքի ծախսման նորմերի իջեցման հաստատված առաջադրանքները չեն կատարել: Որպես դրա արդյունք, սև և գունավոր մետաղների գլանվածքի փաստացի ծախսումները բերազանցել են նորմերի բազայի պլանավորված պահանջը: Իհարկե, նման մոտեցումը ճիշտ չէ: Աշխատանքի առարկաների ծախսումների պլանային նորմերի մշակումը և իջեցման առաջադրանքները պետք է հիմնավորվեն բազիսային ժամանակահատվածում հաստատված պլանային առաջադրանքները չկատարելու պատճառների վերլուծությամբ: Նյութական ռեսուրսների ծախսումների նորմաների իջեցման համար իրականացվող առաջադրանքների օգնությամբ նյութատարության կառավարումը, որը հիմնականում պլանավորվում է նախորդ ժամանակաշրջանում ձեռք բերված մակարդակի հիման վրա, չի կարող նյութական ծախսումների հսկողության լավագույն մեթոդ դառնալ: Ձեռնարկություններն ավանդաբար ձգտում են նախապես բարձրացնել նոր տեխնիկայի և նոր արտադրանքի ծախսումների նորմաները, այնուհետև պայմաններ ստեղծել դրանց հետագա իջեցման համար: Ձեռնարկություններին շատ հաճախ ձեռնադրելով չէ միանգամից իջեցնել նյութական ծախսումները, քանի որ այդ դեպքում նրանք առաջադրանք կստանան նշված ծախսումները նույն մակարդակով (կամ համապատասխան տոկոսային չափով) իջեցնել նաև հետագա տարիներին:

Ուսումնասիրությունները և նյութական ռեսուրսների նորմավորման գոյություն ունեցող պրակտիկայի վերլուծությունը ցույց են տալիս, որ նորմերի փաստացի իջեցման հաշվարկման նկատմամբ չկա միասնական մոտեցում: Գործող մեթոդական ցուցումներում և հրահանգներում ըստ բովանդակության ու ձևի տեղ են գտել զգալի թերություններ ու անհամապատասխանություններ: Այսպես, մեքենաշինական ձեռնարկություններում նյութերի ծախսումների նորմավորման մեջ հիմնական արտադրություններում ամեն մի կոնկրետ արտադրատեսակի համար փաստացի ծախսումների սահմանված կարգ չկա: Նյութական ռեսուրսների ծախսումների իջեցման պլանավորումն անհրաժեշտ է իրականացնել արտադրության տեխնիկական կատարելագործման, պլանավորման, կազմակերպման և այլ միջոցառումների կոմպլեքսային միասնության մեջ:

Նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը հանրային աշխատանքի տնտեսման կարևոր պայման է: Տնտեսավարման արդի փուլում էապես աճում է նյութատարության իջեցման նվազ կապիտալատար եղանակների դերը:

Ռեսուրսների խնայողության համար մեծ նշանակություն ունի առավել կատարելագործված և առաջավոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի ներդրումը, որը նվազեցնում է միավոր արտադրանքի արտադրության ծախսումները՝ հումքի, նյութերի, վառելիքի և էներգիայի գծով:

Ժամանակակից առաջադիմական կոնստրուկցիայի մեքենաների ստեղծումը և ներդրումը հնարավորություն է տալիս մեծ արդյունք ստանալ ոչ միայն նրանց արտադրության, այլ նաև շահագործման ժամանակ:

Մեքենաների քաշի նվազեցումը կրճատում է թողարկման աշխատատարությունը և նյութատարությունը: Այս պրոբլեմների լուծման համար պետք է իրականացնել մի շարք համալիր միջոցառումներ ոչ միայն ձեռնարկության մասշտաբով, այլ նաև կառավարման վերադաս օղակներում: Հատկապես դրանց են վերաբերում նյութական ռեսուրսների տնտեսման այնպիսի միջոցառումներ, որոնցով նախատեսվում է կատարելագործել դրանց պլանավորման, հաշվառման և հսկողության համակարգը: Նյութատարության պլանավորումը ներառում է նյութական ծախսումների մակարդակի և դինամիկայի որոշումը, նյութական ռեսուրսների տնտեսման առաջադրանքների սահմանումը, դրանց կատարման միջոցառումների հաշվառումը և հսկողությունը, ինչպես նաև տեխնիկատնտեսական այն հաշվարկների համակարգը, որոնք արտացոլում են նյութատարության մեծությունը բոլոր համակարգերում:

Ներկայումս նյութատարության պլանը, հատկապես կառավարման ստորին օղակներում (ձեռնարկություն, միավորում), անմիջապես չի կապակցվում պլանավորման մյուս ցուցանիշների հետ, որի հետևանքով շատ դեպքերում կրում է զուտ ձևական բնույթ: Արդի փուլում, երբ անցում է կատարվում լրիվ տնտեսաշվարկի ներդրմանը և ամրապնդմանը, անհրաժեշտ է, որ առտադրանքի նյութատարության պլանը մշակվի տեխարտֆին պլանի մյուս բաժինների հետ միաժամանակ: Նյութերի ծախսի պլանի իջեցումը պետք է օրգանապես կապվի արտադրանքի թողարկման, նյութատեխնիկական մատակարարման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման ու արտադրության մեջ գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման, ինքնարժեքի, արտադրանքի որակի բարձրացման և մյուս ցուցանիշների հետ: Այդ ցուցանիշը պետք է դառնա ինչպես ձեռնարկությունների (միավորումների), այնպես էլ ժողովրդական տնտեսության տնտեսական և սոցիալական դարգացման միասնական պլանի բաղկացուցիչ մասը:

Արտադրանքի նյութատարության պլանավորման հիմնական խնդիրը պետք է հանդիսանա. ա) արտադրանքի նյութատարության վերլուծությունը և արտադրանքի տեխնիկատնտեսական հատկանիշների պահանջներից բխող նյութատարության ծախսերի տնտեսական հիմնավորումը: բ) նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ուղղությունների և գործոնների որոշումը: գ) Արտադրանքի նյութատարության իջեցման սահմանված առաջադրանքների կատարումն ապահովող միջոցառումների համալիր մշակումը: դ) Բնեղեն և արժեքային արտահայտությամբ նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա ակտիվ ներգործող հաշվառման և հսկողության կազմակերպումը:

Տնտեսավարման ներկա ժամանակաշրջանում ձեռնարկությունների (միավորումների) գործունեության պլանավորման բնագավառում արտադրանքի նյութատարության ցուցանիշների կիրառումը պահանջում է լուծել նաև մի շարք մեթոդաբանական հարցեր, որոնք անմիջապես վերաբերում են արտադրանքի և նյութական ռեսուրսների արժեքային և բնաիրային ցուցանիշների փոխկապակցվածությանը, հումքի, նյութերի, վառելիքի, էներգիայի և աշխատանքային ռեսուրսների նորմերի ու նորմատիվների հաշվարկմանը, դրանից ելնելով էլ՝ արտադրանքի նյութատարության իջեցման առաջադրանքների սահմանմանը:

Ներկայումս ձեռնարկությունների և արտադրական միավորումների համար որպես հաստատվող ցուցանիշ տվյալ բնագավառում նախատեսվում է միայն հումքի և նյութերի մատակարարման ծավալը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերադաս կազմակերպությունները դրանց համար նյութերի ծախսի նորմերն իջեցնում են միայն կենտրոնացված կարգով բաշխվող ռեսուրսների հիմնական տեսակների գծով, որոնք չեն անցնում նյութական ռեսուրսների $1/4$ -ից: Բոլոր տեսակի նյութական ռեսուրսների գծով պլան-

նավորվող ժամանակաշրջանում ծախսի նորմերի միջին իջեցման առաջադրանքները սահմանվում են աճող արդյունքով՝ բազիսային ժամանակաշրջանի նկատմամբ: Նյութական ռեսուրսների ծախսերի նորմերի իջեցման կենտրոնացված առաջադրանքները հաշվի չեն առնում յուրաքանչյուր արտադրության առանձնահատկությունները: Կենտրոնացված կարգով նյութական ծախսերի իջեցման առաջադրանքները սահմանվում են նյութական ռեսուրսների այն տեսակների համար, որոնք տվյալ արտադրության համար հիմնական չեն և նշանակալի ազդեցություն չեն կարող թողնել արտադրանքի նյութատարության վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ մեքենաշինական ձեռնարկություններում նշված առաջադրանքների կատարումն ապահովվում է միայն նյութական ռեսուրսների տնտեսման միջոցառումների ներդրման հաշվին, որտեղ հիմնականում հաշվի են առնվում արտադրական ծրագրի փոփոխության արդյունք հանդիսացող նյութերի ծախսի նորմի իջեցումը: Ըստ մասնագետների հաշվարկների, մեքենաշինության մեջ նյութերի ծախսի նորմերի իջեցման ամենամյա պլանավորումն ապահովում է ամբողջ նյութական ծախսումների միայն 0,5—0,7% տնտեսում¹⁰:

Շատ դեպքերում՝ ձեռնարկություններում (միավորումներում) առանձին նյութերի ծախսի նորմի իջեցման առաջադրանքը կատարելու համար սահմանված նյութերի փոխարեն հաճախ օգտագործում են այնպիսի նյութեր (որոշ դեպքերում ավելի թանկարժեք), որոնց նկատմամբ վերադասի կողմից խնայողության առաջադրանքներ չեն սահմանվում: Նման դեպքերից խուսափելու համար անհրաժեշտ է կիրառել ընդհանրացնող ցուցանիշ, որը հնարավորություն կտա չափակցելու տարբեր մեծություններ, բնութագրելով խնայողության ընդհանուր արդյունքը: Այս հարցի արմատական լուծումը, մեր կարծիքով, ավելի խոր ուսումնասիրության կարիք է զգում, քանի որ կապված է ամբողջ պլանային համակարգի վերանայման հարցերի հետ:

ВОПРОСЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИСПОЛЬЗОВАНИЯ МАТЕРИАЛЬНЫХ РЕСУРСОВ

В. Э. ВАРДАПЕТЯН

Резюме

В современных условиях хозяйствования совершенствование использования материальных ресурсов, топлива, энергии приобретает особое важное значение, поскольку оно является одним из основных факторов интенсификации и повышения эффективности общественного производства. В промышленности удельный вес материальных затрат составляет свыше 80% всех текущих производственных затрат и имеет тенденцию к росту.

Советский Союз располагает большими природными ресурсами, однако ставит задачу их более экономного использования не только потому, что большинство из них невоспроизводимо, но и потому, что экономия материальных ресурсов означает экономию общественного труда. Научно-технический прогресс способствует решению этого вопроса, поскольку он влечет за собой структурное изменение, заключающееся в сокращении удельного веса добывающих отраслей, снижении материалоемкости производства.

В социалистическом обществе режим экономии имеет всеобщий характер: от его реализации эффективность будет максимальной только в тех случаях, когда он будет действовать во всех отраслях народного хозяйства, на всех уровнях управления, во всех направлениях хозяйственной деятельности.

Одним из основных условий рационального использования материальных ресурсов является совершенствование системы планирования, учета и контроля.

¹⁰ «Бухгалтерский учет», 1980, № 8, с. 22.